



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և  
ստեղծագործական ունակությունների զարգացումը ֆիզկուլտուրա  
առարկայի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ

Ֆիզկուլտուրա

ՀԵՂԻՆԱԿ

Արմեն Մուրադյան

ՄԱՐԶ

Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Ափնայի միջն դպրոց

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |    |
|--|----|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....   | 3  |
| ԳԼՈՒԽ 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ..... | 5  |
| ԳԼՈՒԽ 2. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ .....   | 12 |
| ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....   | 22 |
| ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....  | 24 |

## ՆԵՐՄՈՒԹՅՈՒՆ

**Հետազոտության արդիականությունը:** Ֆիզիկական կուլտուրան կրթական հաստատություններում ներկայացված է որպես կրթական ոլորտ, որպես ուսումնական առարկա և աշակերտների անձի ձևավորման կարևորագույն հիմնական բաղադրիչ, որը արտացոլված է Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենքում: Այն նպատակ ունի ապահովել կենսականորեն կարևոր շարժողական հմտությունների և ունակությունների անհրաժեշտ մակարդակի զարգացումը, ինչպես նաև տալիս է տեսական գիտելիքներ: Լինելով կրթության բաղադրիչի պարտադիր մաս՝ ֆիզկուլտուրան նպաստում է աշակերտների հոգու և մարմնի ներդաշնակությանը, նրանց մոտ ձևավորում է այնպիսի համամարդկային արժեքներ, ինչպիսիք են՝ առողջությունը, ֆիզիկական և հոգեբանական բարեկեցությունը:

Բազմաստիճան կրթական համակարգում ֆիզկուլտուրայի բովանդակությունը որոշվում է պետական կրթական չափորոշիչներով, ուսումնական պլանով և օրինակելի ուսումնական ծրագրերով: Այս ամենը ապահովում է աշակերտների ֆիզիկական դաստիարակության անընդհատությունը, տարբեր տարիքի և սեռի դպրոցականների շարժողական և տեխնիկական պատրաստվածության հանդեպ նրա բովանդակության և պահանջների հաջորդականությունը:

**Հետազոտության նպատակը:** Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ֆիզկուլտուրա առարկայի դասավանդման ընթացքում:

Ֆիզիկական դաստիարակությունը փոխադարձաբար կապված է դաստիարակության համակարգի մյուս բաղադրամասերի (բարոյական, աշխատանքային, գեղագիտական և այլն) հետ:

**Հետազոտության խնդիրը:** Ֆիզիկական դաստիարակության խնդիրները բազմազան են ու բազմաբնույթ: Առաջին կարևոր խնդիրը սովորողների ֆիզիկական զարգացումն ու առողջության ամրապնդումն է: Այս խնդիրը պահանջում է՝

ա) ամեն կերպ նպաստել երեխայի օրգանիզմի զարգացմանն ու ամրապնդմանը,

բ) կատարելագործել օրգանիզմի ֆունկցիաները,

գ) կանխել երեխայի հիվանդությունները, պահպանել առողջությունը:

Այս խնդիրը լուծված կարելի է համարել այն դեպքում, եթե այդ պահանջները կատարվեն ինչպես հարկն է:

**ԳԼՈՒԽ 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՑՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅԱՆ  
ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳՍՑ ՈՒՍԸ ՖԻԶԿՈՒԼՏ ՈՒՐԱՍՈՒՐԿԱՅԻ ԴԱՍԿԱՆԴԱՆ  
ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Ֆիզիկական դաստիարակության առաջացումը վերագրվում է մարդկային հասարակության պատմության ամենավաղ շրջանին: Ֆիզիկական դաստիարակության տարրերը ծագել են տոհմատիրական հասարակարգում / Н.И. Пономарев , 1970 / : Մարդիկ զբաղվել են սննդի ավազակությամբ, որոտորդությամբ, կառուցել կացարաններ և այդ բնական անհրաժեշտ գործունեության ընթացքում ինքնաբուխ տեղի է ունեցել նրանց ֆիզիկական ընդունակությունների՝ ուժի, դիմացկունության, արագաշարժության կատարելագործումը: Աստիճանաբար պատմական գործընթացների ընթացքում մարդիկ ուշադրություն են դարցրել այն հանգմանքի վրա, որ տոհմի այն անդամներն ովքեր վարում են առավել ակտիվ և շարժունկ ապրելակերպ, բազմակի անգամ կրկնում են տարբեր ֆիզիկական գործողություններ, դրսևորում են ֆիզիկական ճիգեր, դառնում են ուժեղ դիմացկուն և աշխատունակ: Սա էլ հենց բերեց մարդկության կողմից վարժման երևույթի գիտակացված ընկալմանը: Հենց վարժման երևույթն է դարձել ֆիզիկական դաստիարակության հիմքը: Գիտակցելով վարժման էֆֆեկտը՝ մարդնը սկսեց աշխատանքային գործունեությունում իրեն անհրաժեշտ շարժումները ( գործողությունները) նմանագործել բուն աշխատանքային գործունեությունից դուրս, օրինակ տեգ ինետումը կենդանու պատկերների վրա: Հենց որաշխատանքային գործողությունները սկսեցին կիրառվել բուն աշխատանքային գործունեությունից դուրս, դրանք վերածվեցին ֆիզիկական վարժությունների: Աշխատանքային գործողությունների վերածումը ֆիզիկական վարժությունների նշանակալի կերպով լայնացրին նրանց ազդեցությունները մարդկանց վրա, առաջին հերթին ինքնուրույն ֆիզիկական կատարաելագործման առումով: Հետագայում էվոլյուցիոն զարգացման ընթացքում պարզվել է, որ ֆիզիկական պատրաստության նշանակալի լավ արդյունքի կհասցվի, երբ մարդը Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա Ա. Ռ. Խաչատրյան սկսում է վարժվել մանկուց, այլ ոչ թե հասուն տարիքում, այսինքն երբ նրան նախապես են սկսում պատրաստել կյանքին և աշխատանքին: Այսպիսով, մարդկության կողմից վարժվածության երևույթի, մարդու կյանքին նախանական պատրաստության

կարևորության գիտակցումը և դրանց միջև կապի հաստատումը դարձան ակունքներ իրական ֆիզիկական դաստիարակության առաջացման համար: Ֆիզիկական դաստիարակության կազմակերպման ձևերը առաջացել են հին Հունաստանում երիտասարդներին զինվորական և մարզական հատուկ վարժությունների ուսուցման տեսքով: Սակայն մինչև նորագույն պատմությունը դրանք մնացել են որպես արտոնյալ դասի ոչ շատ ներկայացուցիչների ձեռքբերումը:

Ֆիզիկական դաստիարակությունը հանդիսանում է դաստիարակության կարևորագույն բաղադրամաս և մեծ նշանակություն ունի անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար: Հասարակության կարևորագույն հիմնախնդիրներից մեկն է՝ ապահովել մանկական հասակից ֆիզիկական ճիշտ դաստիարակություն՝ հոգևոր ուժերի ներդաշնակ զարգացմամբ հանդերձ: Ֆիզիկական դաստիարակության շնորհիվ է ապահովում աճող սերնդի առողջությունը, դրա ամրապնդումը: Այն ապահովում է մարդու օրգանիզմի նորմալ աճը և կարևորագույն համակարգերի ու ֆունկցիաների համակողմանի զարգացումը, առողջ ապրելակերպի ձևավորումը, աշխատանքի, հայրենիքի պաշտպանության պատրաստությանը: Ֆիզիկական դաստիարակությունն ունի իր բազմազան ու բազմաբնույթ հիմնախնդիրները, որոնք իրականացնելիս պետք է հաշվի առնել աշակերտների տարիքային առանձնահատկությունները: Այդ հիմնախնդիրներից են.

**1. Ամրապնդել սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության զարգացումը:** Ֆիզիկական դաստիարակությունն ուղղված է օրգանիզմի ձևաբանական ու ֆունկցիոնալ կատարելագործմանը, արտաքին միջավայրի անբարենպաստ պայմանների դեմ կայունությունը, հիվանդությունը կանխելուն ու՝ առողջության պահպանմանը:

## **2. Շարժողական որակների զարգացումը**

Ինքնուրույն շարժողական գործունեության մարդու ընդունակությունը պահովում է միայն ֆիզիկական բոլոր որակների՝ ուժի, դիմացկունության, ճարպկության և արագության բարձունքների դաշնակ զարգացմամբ:

## **3. Շարժողական կարողությունների ու հմտությունների զարգացումը:**

Շարժողական գործունեությունը հաջողությամբ է իրագործվում, երբ մարդը տիրապետում է հատուկ գիտելիքների, կարողությունների և հմտությունների: Հենվելով շարժողական պատկերացումների ու գիտելիքների վրա՝ աշակերտը հնարավորություն է ստանում կառավարել իր գործողությունները շարժողական պրակտիկայի զանազան պայմաններում: Կենսականորեն կարևոր շարժողական կարողությունները ձևավորվում են որոշակի շարժումների կատարման գործընթացում: Կան բնական (վազք, լող, քայլքնայլն) և ոչ բնական (վարժություններ մարմնամարզական գործիքների վրա, ակրոբատիկա և այլն) շարժողական գործողություններ, որոնք լրացնում են միմյանց և նպաստում ձեռք բերել շարժողական այն փորձը, որը հնարավորություն է տալիս մարդուն ընտելանալ շարժողական գործողություններին, ազատորեն կիրառել դրանք պրակտիկայում[3]:

#### **4.Ֆիզիկական կուլտուրայի սիստեմատիկ պարապմունքներում կայուն հետաքրքրության ու պահանջմունքի դաստիարակությունը:**

Ֆիզիկական կուլտուրան այն հիմնական միջոցն է, որի շնորհիվ սովորողները սիստեմատիկ պարապմունքների ընթացքում ֆիզիկական վարժություններին տիրապետելու, այն մշտական սովորույթ դարձնելու միջոցով կատարելագործում են իրենց ֆիզիկական զարգացումը: Ֆիզիկական դաստիարակությունն ունի իր միջոցները: Դրանցից հիմնականներն են՝ ֆիզիկական վարժությունները, որի տակ հասկացվում են մարմնամարզությունը, խաղերը, տուրիզմը, սպորտը, բնական և հիգիենիկ գործոնները: Մարմնամարզությունն ունի օրգանիզմի վրա ընտրական ազդեցություն:

Կա հիգիենիկ, սպորտային, գեղարվեստական, արտադրական, բուժական մարմնամարզություն: Սովորողների համար հիմնականն ընդհանուր մարմնամարզությունն է: Խաղերը զարգացնում են երեխայի ֆիզիկական ուժը, մկանները, ձեռքերի գործունեությունը, արդյունավետ դարձնում ընկալումը, հասկացումը, մշակում և կատարելագործում են որոշ բարոյական որակներ: Խաղերը կազմակերպելիս պետք է հաշվի առնել երեխաների տարիքային առանձնահատկությունները: Տուրիզմը, զբոսանքները, էքսկուրսիաները, արշավներն ու ճանապարհորդություններն են, որոնք կազմակերպվում են հայրենի երկրամասին, նրա պատմական ու մշակութային

հուշարձաններին աշակերտներին ծանոթացնելու համար: Տուրիստական միջոցառումների շնորհիվ աշակերտները ձեռք են բերում ֆիզիկական կոփվածություն, դիմացկունություն, բարդացված հանգամանքներում կողմնորոշվելու ու տեղաշարժվելու կիրառական հմտություն, կոլեկտիվի կյանքի ու գործունեության, ղեկավարման ու ենթարկվելու փորձ, պրակտիկայում յուրացնում են բնական միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի նորմերը[1]:

«Ֆիզիկական դաստիարակություն»: Ֆիզիկական դաստիարակությունը դաստիարակության ձև է, որի յուրահատուկ բովանդակությունը կազմում է շարժումների ուսուցումը, ֆիզիկական որակների դաստիարակությունը, ֆիզկուլտուրային յուրահատուկ գիտելիքների ձեռք բերումը և ֆիզկուլտուրայի պարապմունքներին գիտակցված պահանջումների ձևավորումը, այն երեխայի մեջ զարգացնում է ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունները, ա վելի ճարպիկ է դարձնում երեխայի միտքը: Շարժումների ուսուցումը իր բովանդակությամբ ֆիզիկական կրթությունն է, մարդու կողմից սեփական շարժումների ռացիոնալ կառավարման միջոցների համակարգված յուրացումը, այդ ճանապարհով կյանքում անհրաժեշտ շարժողական կարողությունների և հմտությունների և դրանց հետ կապված գիտելիքների ձեռք բերումը: Շարժումներին տիրապետելով պարապողները ձեռք է բերում ունակություններ լիարժեք և ռացիոնալ ձևով արտահայտելու իրենց սեփական ֆիզիկական որակները: դրա հետմեկտեղ նրանք բացահայտում են սեփական մարմնի շարժումների օրինաչափությունները: Ըստ յուրացվածության աստիճանի շարժողական գործողությունների տեխնիկան կարող է կատարվել շարժողական ունակությունների կամ շարժողական հմտությունների ձևով: Այդ պատճառով էլ հաճախ «շարժումների ուսուցում» տերմինի փոխարեն ֆիզիկական դաստիարակությունում շատ հաճախ կիրառում են « շարժողական ունակությունների և հմտությունների ձևավորում » տերմինը: Ֆիզիկական որակների դաստիարակումը համարվում է ֆիզիկական դաստիարակության նշանակալի կողմերից մեկը: Ուժի, արագաշարժության, դիմացկունության և այլ ֆիզիկական որակների զարգացմանը ուղղված նպատակային կառավարումը ազդում է նաև օրգանիզմի բնական հատկանիշների բարելավման վրա, դրանով պայմանավորելով նրա



Ֆունկցիոնալ հնարավորությունների քանակական և որակական փոփոխությունները: Բոլոր ֆիզիկական որակներին բնորոշ են , այսինքն տրվում են մարդուն բնական գիտելիքների տեսքով, որոնք անհրաժեշտ է զարգացնել և կատարելագործել: Երբ այդ բնական զարգացման գործընթացը ձեռք է բերում հատուկ կազմակերպված, այսինքնմանակավարժական բնույթ, ապա այս դեպքում խոսքը գնում է, ոչ թե զարգացման, այլ ֆիզիկական որակների դաստիարակման մասին: Ֆիզիկական դաստիարակության գործընթացում ձեռք են բերվում նաև ֆիզկուլտուրային և սպորտային գիտելիքների լայն շրջանակը: Սոցիոլոգիական, բժշկական, կենսաբանական, և մեթոդական բովանդակության գիտելիքները ՖԴ գործընթացը դարձնում են առավել գիտակված և դրա հետ կապված ավելի արդյունավետ: Այսպիսով ՖԴ իրենից ներկայացնում է որոշակի կրթական և դաստիարակչական խնդիրների լուծման գործընթաց, որին հատուկ է մանկավարժական գործընթացների բոլոր հատկանիշները: Նրա տարբերակող յուրահատկությունը կայանում է նրանում, որ այն ապահովում է մյուս շարժողական կարողությունների և հմտությունների ինպես նաև ֆիզիկական որակների ուղղորդված զարգացման համակարգված ձևավորումը[2]:

Ֆիզիկական դաստիարակությունը որպես համակարգված կառուցվածք՝ իրականացվում է ֆիզիկական կուլտուրայի դասերին, ուսումնական գործընթացի սիստեմատիկ պարապմունքների և դասերից հետո լրացուցիչ պարապմունքների ձևերով: Ֆիզիկական դաստիարակության կազմակերպումը ամբողջապես դրված է ֆիզիկական կուլտուրա առարկան դասավանդվող ուսուցչի վրա: Հենց նրա պրոֆեսիոնալ գրագիտությունից, սովորողների հոգեֆիզիկական առանձնահատկությունների մասին ունեցած գիտելիքներից է կախված աշխատանքի արդյունավետությունը: Ուսուցչի անձը պետք է համապատասխանի հատուկ կրթության պահանջներին: Ուսուցչի համար կարևոր փաստաթուղթ է հատուկ (օժանդակ) դպրոցի ֆիզիկական դաստիարակության հմակարգված ծրագիրը, որը կազմված է դիդակտիկական և ընդհանուր ֆիզիկական սկզբունքների հիման վրա, նաև սեփական ծրագրի կառուցման վրա: Ֆիզիկական վարժությունները ուղղված են ազդելու սովորողների ֆունկցիոնալ վիճակի բարելավմանը,

ձևավորելու շարժողական ֆունկցիաների ունակություններ և հմտություններ: Ծրագրում վարժությունները ներկայացված են.

➤ վարժություններ առարկաներով և առանց առարկաների,

➤ վարժություններ վազքի, թռիչքի տարրերով,

➤ վարժություններ հատուկ ուղղվածությամբ (տեսողական, տարածական ընկալման, ուժի, արագության և ճիշտ շարժումների),

➤ շարժողական և սպորտային խաղեր,

➤ լող:

Յուրաքանչյուր ֆիզիկական վարժություն բնութագրվում է իր ներքին և արտաքին կառուցվածքի դրսևորումներով: Ներքին կառուցվածքը բնութագրվում է օրգանիզմի տարբեր ֆունկցիոնալ գործընթացների փոխկապակցվածությամբ (հանգիստ, հոգնածություն և այլն): Ներքին կողմը՝ արդյունք է վարժությունների տարբեր համադրման իրականացման (տարածական, ժամանակային, ուժային):

Հատուկ (օժանդակ) դպրոցում ֆիզիկական դաստիարակությունը իր մեջ ներառում է.

➤ մանկավարժական գործընթաց, որը ուղղված է մտավոր հետամնացություն ունեցող դպրոցականի անձի զարգացմանը,

➤ ֆիզիկական կուլտուրան, որպես ուսումնական առարկա՝ իր նպատակներով, խղիբներով, սկզբունքներով և ուսուցման մեթոդներով,

➤ պայմանները և միջավայրը, որտեղ մտավոր հետամնացություն ունեցող երեխան ուսուցանվում է, դաստիարակվում և կատարելագործվում է որպես անձ:

Դպրոցական, աշխատանքային և հետագայում սոցիալ-սպորտային միջավայրը մեծ ազդեցություն ունի անձի զարգացման անհատականության վրա՝ գիտելիքների յուրացում, շարժումների յուրացում և այլն: Հենց ֆիզիկական դաստիարակության գործընթացում է իրականանում գիտելիքների յուրացումը, օգնում է յուրաքանչյուր երեխայի ներգրավել ֆիզիկական պարապմունքների մեջ, հասնել «սպորտային» արդյունքների, սովորել մասնակցել լրացուցիչ կրթության տարբեր ձևերում:

«Ֆիզիկական կուլտուրա» ուսումնական առարկայի բովանդակության մեջ ներառված է չորս կոմպոնենտ.

➤ տեղեկատվական՝ իրենից ներկայացնում է շարժողական գործունեության կազմակերպման մեթոդները և ձևերը, ֆիզիկական զարգացումը և շարժողական նախապատրաստվածությունը,

➤ դրդապատճառային՝ սովորողի մոտ առաջացնել դրդապատճառ, ներգրավվելու ֆիզիկական վարժությունների կատարման համակարգ, որի նպատակն է բավարարել շարժողական պահանջները

➤ օպերացիոն՝ որոշում է ֆիզիկական վարժությունների պարապմունքների պլանավորման ձևերը, կարգավորում է տարբեր տիպի ծանրաբեռնվածությունը ֆիզիկական դաստիարակության համակարգում՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի մասնակցությունը,

➤ շտկողա-զարգացնող՝ նպաստում է որոշելու և ընդգրկելու սովորողների ֆիզիկական, մոտորիկայի, ճանաչողական գործունեության խանգարման շտկման միջոցները:

Ծրագրային նյութը ունի ընտրողական բնույթ:

Ֆիզիկական դաստիարակության նպատակը դպրոցական ինքնուրույն զարգացումն է, որը ուղղված է ձևավորելու կյանքի համար կարևոր ունակություններ և հմտություններ, ֆիզիկական դաստիարակության որակներ, ֆիզիկական ընդունակությունների զարգացում, ֆիզիկական խանգարումների վերացում:

Ֆիզիկական կուլտուրա առարկայի ծրագրում հատուկ որոշված է մտավոր հետամնացություն ունեցող դպրոցականների դաստիարակության խնդիրները, ընտրված են վարժությունների հիմնական ձևերը: Տարբեր տիպի վարժություններ կատարելիս, հաշվի են առնվում սովորողների տարիքային և ֆիզիկական առանձնահատկությունները: Ֆիզիկական դաստիարակության ծրագրում ուսումնական նյութերի բովանդակության մեջ ներկայացված են հետևյալ հիմնական շարժումները՝ քայլք և վազք, ցատք և այլն: Այն երեխաները, որոնք ունեն հենաշարժողական ապարատի, սեմատիկ բնույթի խանգարումներ, անհրաժեշտ է նրանց հետ տանել հատուկ աշխատանք:

## ԳԼՈՒԽ 2. ԿՐՏ ՄԵՐ ԴՊՐՈՑ ԱԿԱՆՆԵՐԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅ ՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՍԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ժամանակակից տարրական կրթության հիմնական նպատակը երեխայի անձի դաստիարակությունն ու զարգացումն է: Այս նպատակին հասնելն անհնար է առանց "ստեղծագործություն" կրթական ասպարեզի առջև ծառայած խնդիրների իրականացման», որի բաղադրիչ մասն է ֆիզիկական կուլտուրան:

Յ. Ա. Պոլոյանովան հետազոտության մեջ առանձնացրել է հետևյալ ստեղծագործական գործունեության զարգացման ժամանակահատվածները, որոնք ներառում են մանկության ողջ ժամանակահատվածը՝ նախագեղարվեստային ժամանակաշրջան (կամ «Խզբզոցի» փուլ):

Ժամանակակից պայմաններում դպրոցական կրթության խնդիրները հանգում են ոչ միայն աշակերտների գիտելիքների որոշակի քանակի յուրացմանը, այլև անձի զարգացմանը, իրենց «Ես» - ի հնարավորությունների իրականացման համար պայմանների ստեղծմանը:

Գործնականում լավ ուսուցչի և հաջողակ կրթության կերպարը հաճախ հանգում է դասարանում հարմարավետություն ստեղծելու, խոսքի ճիշտ ձևավորման, սուր հարցերից ու կոնֆլիկտներից խուսափելու և համոզելու ունակությանը: Արդյո՞ք դա չի հիշեցնում ցանկացած մարդու կյանքում առօրյա իրավիճակներ: Այդ իսկ պատճառով հաճախ ապակողմնորոշիչ տպավորություն է ստեղծվում, թե «բոլորը կարող են սովորեցնել»: Ուսուցիչները մտավորականության մյուս խմբերի համեմատ իրենց մասնագիտությամբ ամենակարճ տեւողությունն ունեն (միջինը 5-7 տարի): Նույնիսկ վետերան ուսուցիչների բարձր համամասնությամբ գյուղական վայրերում այն չի գերազանցում 11 տարին: Մասնագիտության մեջ հաճախ գերակշռում են երիտասարդներն ու վետերանները: Առաջիններն աչքի են ընկնում ոչ հասուն մասնագիտական կողմնորոշումներով և քիչ փորձով, իսկ երկրորդներին վերագրվում է որոշակի պահպանողականություն: Այս ամենը դժվարացնում է մասնագիտական փորձի արդյունավետ փոխանցումը, զարգացումն ու թարմացումը: Ուսուցչի մասնագիտության կայունությունը հաճախ կապված է հատուկ «համբերության», հոգեբանական համատեղելիության, անձնական դիրքի համապատասխանության հետ: «Ուժեղ

անհատականությունը»՝ զարգացած հավակնություններով կամ սոցիալական առաջընթացի նկատմամբ վերաբերմունքով, հաճախ չի պահպանվում ուսուցչի մասնագիտության մեջ:

Ուսուցման զգալի մասը բնութագրվում է նպատակադրման և մասնագիտական գործունեության մոդելների քայքայմամբ, որը հետևանք է արդեն վերը նշված բնութագրերի: Նպատակների էրոզիան արտահայտվում է նրանով, որ այս խմբում և նույնիսկ առանձին թիմերում չափազանց հազվադեպ է ձևավորվում գործունեության ընդհանուր և հատուկ նպատակների միասնություն: Ուսուցիչների մի մասը կենտրոնացած է գիտելիքների փոխանցման վրա, երկրորդը՝ սովորողների կարողությունների զարգացմանը, երրորդը՝ երիտասարդների կյանքում ինքնուրույն կողմնորոշվելու կարողության ձևավորմանը: Գործունեության մոդելներում առկա է նաև անհամապատասխանություն, որը չափազանց ուժեղ է նպատակների մի շարք հաջողությամբ հասնելու համար: Այս առումով հարց է առաջանում ուսուցիչների նորարարական ներուժի, սոցիալական ցանկացած նոր պատվեր կատարելու նրանց կարողության մասին:

համագործակցային ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների մեծ մասը նախատեսված է որոշակի միջին անձի համար՝ երեխաներ, երեխաներ, ուսանողներ: Դպրոցը երեխայի սեռը հաշվի է առնում միայն աշխատանքի և ֆիզկուլտուրայի դասերին (և նույնիսկ այն ժամանակ ոչ միշտ), մնացած կյանքն ընթանում է անսեռ ռեժիմով՝ ոչ կյանք, ոչ գիտելիք, ոչ աշխատանք, ոչ ժամանց, ոչ էլ. սոցիալական գործունեությունը կառուցվում է հաշվի առնելով սեռը: Նույն ժամանակագրական, բայց տարբեր հոգեբանական տարիքի տղաների և աղջիկների կրթությունը (տարբեր հասունացման շրջանների պատճառով) բացասական հետք է թողնում նրանց հաղորդակցման մշակույթի վրա:

Ինչպես նշում են հոգեբանները, տարբեր տեսակի գործունեության իրականացման համար, երեխաների մտավոր զարգացման մեջ մեծ նշանակություն ունեն այն հատկանիշները, ունակությունները, կարողությունները, հմտությունները, որոնք նրանք ձեռք են բերում նկարչության, ապլիկացիայի և կունստրուկտորների հետ խաղի գործընթացում: Լ. Ա. Վենգերի կարծիքով, գործունեության յուրաքանչյուր ձևով կա

մոտավոր և կատարողական մասեր և համապատասխանաբար մոտավոր և կատարողական գործողություններ:

Հաջորդիվ, առանձնացնենք ստեղծագործական ունակությունների զարգացման պայմանները, անդրադառնալով Բ. Պ. Նիկիտինի ուսումնասիրություններին՝

1. «ստեղծագործական ունակությունների զարգացման վաղ սկիզբը»
2. «նախապես երեխային շրջապատել այնպիսի միջավայրով և հարաբերությունների այնպիսի համակարգով, որոնք կզարգացնեն նրա ստեղծագործական ամենատարբեր գործունեությունների նկատմամբ հակումը և կխթանեն նրա մեջ հենց այն, ինչը համապատասխան պահին կարող է առավել արդյունավետ զարգանալ»
3. «երեխայի ուժերի առավելագույն լարում»
4. «անհրաժեշտ է երեխային ավելի մեծ ազատություն տալ գործունեության ընտրության, գործերի փոփոխման, մեկ գործով զբաղվելու տևողության, աշխատանքի մեթոդների ընտրության և այլնի մեջ»
5. «երեխային մեծահասակներին չպարտադրող, ինչպես, բարյացակամ օգնություն ցուցաբերելը».[9, c. 5]

Հաջորդը քննարկենք, թե ինչ է վերաբերում տարրական դասարանների աշակերտների դասի ստեղծագործական գործունեության զարգացման մանկավարժական պայմաններին:

- ուսուցչի օգնությամբ կրտսեր դպրոցականների ստեղծագործական գործունեության գիտակցումը որպես ուսուցման նպատակ;
- կրտսեր դպրոցականների ստեղծագործական գործունեության ազատությունը դրա մանկավարժական կազմակերպության և ուսուցչի կողմից առաջնորդության հետ համադրելը;
- խնդրահարույց ուսուցման մեթոդները որպես ստեղծագործական գործունեության կազմակերպման առաջատար եղանակներ;
- կրտսեր դպրոցականների ստեղծագործական գործունեության արդյունքների որոշում;
- կրտսեր դպրոցականների ստեղծագործական գործունեության շտկում:

Դասի ընթացքում կրտսեր դպրոցականների ստեղծագործական գործունեության

զարգացման նշված մանկավարժական պայմաններն անհրաժեշտ և բավարար են, քանի որ ներառում են ուսումնական գործընթացի հիմնական և ամբողջական տարրերը՝ դիդակտիկ նպատակալացություն, ուսուցման բովանդակության և մեթոդների ընտրություն, ախտորոշիչ մանկավարժական վերլուծություն և ուղղում:

Մեկ ուսումնական առարկայի դասերի ժամանակ կրտսեր դպրոցականների ստեղծագործական գործունեության զարգացման մանկավարժական պայմանների բավարար իրացումն ապահովում է տարրական դասարանների աշակերտների ստեղծագործական գործունեության մակարդակի բարձրացում այլ առարկաների դասերին: Ուսանողների կողմից յուրացված ստեղծագործական գործունեության մակարդակները դառնում են անձի կայուն նոր հասկանիշներ միայն դասի ժամանակ կրտսեր դպրոցականների ստեղծագործական գործունեության զարգացման մանկավարժական պայմանների նպատակային, պարբերական և երկարատև կիրառման միջոցով:

Ընդհանուր առմամբ, ստեղծագործական ունակությունների հաջող զարգացումը հնարավոր է միայն որոշակի պայմանների ստեղծման դեպքում, որոնք նպաստում են դրանց ձևավորմանը: Այդ պայմաններ են՝

1. երեխաների ինտելեկտուալ զարգացում,
2. երեխայի կողմից առավելագույն լարվածություն պահանջող խնդիրների ինքնուրույն լուծում, երբ երեխան հասնում է իր հնարավորությունների առավելագույնին,
3. աշակերտին գործունեության ընտրության, գործերի փոփոխման, մեկ գործով զբաղվելու տևողության և այլ հարցերում ազատություն տալը,
4. մեծահասակների խելացի բարյացակամ օգնություն (այլ ոչ թե հուշում),
5. հարմարավետ հոգեբանական միջավայր, չափահասի կողմից երեխայի ստեղծագործական ձգտումների խրախուսում:

Ստեղծագործական ունակությունների զարգացման համար կարելի է առաջարկել հետևյալ միջոցառումները, որոնք ուղղված են դպրոցականների ստեղծագործական ունակությունների արդյունավետ զարգացմանը՝

1. ստեղծագործական ունակությունների զարգացմանն ուղղված ֆիզկուլտուրայի դասերի

ծրագրի ներածություն;

2. ֆիզկուլտուրայի դասերի ժամանակ երեխաներին ստեղծագործական բնույթի առաջադրանքների հանձնարարում;
3. երեխաների ստեղծագործական ունակությունները զարգացնող հատուկ խաղերի օգտագործում դասերի ժամանակ,
4. աշխատանք ծնողների հետ:

Մեր հետազոտության համար կարևոր ենք համարում Վ. Գ. Մարանցմանի կատարած եզրակացությունները: Նրա կարծիքով, դասերի համակարգը պլանավորելիս կարևոր է նախատեսել հետևյալ դրույթները՝

ա) դասերի թեմատիկ բազմազանություն,

բ) տարբեր տեսակի դասերի փոխարինում (գրույց, կոմպոզիցիա, սեմինար, վիկտորինա, էքսկուրսիա, պրակտիկա, կոնսուլտացիա և այլն);

գ) աշակերտների ինքնուրույնության ակտիվացման մեթոդների փոփոխում (տարբեր տեսակի խմբային և անհատական առաջադրանքներ, արվեստի տարբեր տեսակների օգտագործում, միջառարկայական կապեր, ուսուցման տեխնիկական միջոցներ)[10, c. 112].

Այսպիսով, ուսումնասիրելով հետազոտության հիմնական հասկացությունները, դիտարկելով կրտսեր դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացման խնդրի էության վերաբերյալ տարբեր տեսակետներ, անցնենք ֆիզկուլտուրայի դասերի առանձնահատկությունների ուսումնասիրությանը, քանի որ դրանց օգտագործումը համարում ենք կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության մեջ ստեղծագործական ունակությունների զարգացման առավել արդյունավետ միջոց:

Այսպիսով, կարելի է առանձնացնել երեխաների ստեղծագործական ունակությունների հաջող զարգացման հետևյալ պայմանները:

- երեխայի մտավոր զարգացումը;
- կրտսեր աշակերտի զարգացմանը նպաստող միջավայրի առկայություն;
- երեխայի կողմից իր հնարավորությունների առավելագույն օգտագործումը այս կամ այն խնդիրների ինքնուրույն լուծման դեպքում;



- սովորողի մոտ ազատության առկայությունը գործունեության ուղղությունները, տևողությունը և գործերը որոշելիս, ինչպես նաև մեկ գործով զբաղվելու ժամանակը որոշելիս;
- մեծահասակների բարյացակամ օգնությունը, բայց ոչ հուշումը;
- երեխայի ստեղծագործական գործունեության ձգտումների խրախուսումը, ինչպես նաև բարենպաստ և հարմարավետ հոգեբանական միջավայրի ստեղծումը:

### **Ֆիզիկական կուլտուրայի դաս**

Ֆիզիկական վարժությունների գործընթացի տիրապետման ժամանակ որոշվում են կրթական, դաստիարակչական, բուժա-առողջարարական և շտկողա-փոխհատուցողական խնդիրներ: Կրթական խնդիրները ուղղված են երեխաների մոտ ձևավորելու շարժողական ունակություններ և կարողություններ, ֆիզիկական վարժությունների հիգիենայի տարրական էլեմենտների, սովորողների առողջության վիճակի մասին տեղեկատվություն: Տարբեր հատուկ ընտրված վարժությունների, խաղերի միջոցով, երեխաների մոտ տարբեր չափերով զարգանում է ուժը, արագությունը և այլն: Այս բոլոր շարժողական որակները նպաստում են դպրոցականների մոտ դաստիարակելու համոզվածություն հասարակ և ավելի բարդ վարժություններին տիրապետելու: Դաստիարակչական խնդիրները լուծվում են կրթական խնդիրներին զուգահեռ: Բոլոր դասերի ժամանակ դաստիարակվում կարգապահությունը, սեփական հույզերին, զգացմունքների տիրապետելու կարողություն, ազնվություն, կամք, ընկերություն, փոխօգնություն և այլն: Այս խնդիրը բավականին բարդ է և պահանջում է երկար ժամանակ:

Բուժա-առողջաբապահական խնդիրը սովորողներին ընդգրկում է այն վարժությունների մեջ, որոնք նպաստում են նրանց առողջության ամրապնդմանը, օգնում են պարա-մկանային և շնչառական օրգանների զարգացմանը:

Ուսուցիչը պետք է ընտրի հատուկ վարժություններ, դրանց տալով համակարգված բնույթ, միշտ օգտագործի այդ համակարգը՝ ուղղելու ֆիզիկական զարգացման, մոտորիկայի խանգարումները:

Շտկողա-զարգացնող խնդիրները նախատեսում են այնպիսի պարապմունքների կազմակերպում, որի ժամանակ ֆիզիկական վարժությունները օգտագործվում են ֆիզիկական, մտավոր զարգացման խանգարումների շտկման համար: Ֆիզիկական կուլտուրայի դասերը պետք է լինեն էմոցիոնալ, առաջացնել շարժողական գործունեության հանդեպ հետաքրքրություն: Ուսուցիչը պետք է լուրջ պատրաստվի դասին, իմանա դասարանի սովորողների կազմը, նրանց ֆիզիկական զարգացման մակարդակը, շարժողական պատրաստվածությունը, մտավոր զարգացման առանձնահատկությունները, ծանոթանա սովորողների հետ, հաճախի մաթեմատիկայի, գրավորի, աշխատանքի ուսուցման դասերին, խորհրդակցի դասղեկի, դպրոցի բժշկի հետ: Միայն այդ դեպքում կարող է հստակ իրականացնել դասի խնդիրները: Դասին պատրաստվելով, ուսուցիչը պետք է հաշվի առնի նախորդ դասի արդյունքները, երեխաների միջև եղող հարաբերությունները, ի՞նչը երեխաները չէին կարող հաջող կատարել և ի՞նչու: Անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել ֆիզիկական վարժությունների և խաղերի ընտրության վրա: Որոշել երեխաների տեղը դահլիճում, իր տեղը, շարժվելը, ինչպես և ինչ հերթականությամբ կատարել վարժությունները, սպասվող արդյունքները: Դասի պլանավորման ժամանակ ուսուցիչը պետք է հաշվի առնի.

- որտեղ պետք է անցկացվի դասը՝ դահլիճում, թե դրսում,
- դասի կահավորման ապահովում,
- դասացուցակում տվյալ դասի տեղը, դասի տիպը,
- երեխայի պատրաստվածությունը դասին, ծանրաբեռնվածությանը,
- երեխայի հետաքրքրությունը պարապմունքներին:

Հատուկ ընտրված վարժությունները, մեթոդները ապահովում են դասի հանգիստ անցկացումը: Նախապատրաստական մասը հանդիսանում է կազմակերպչական, օգնում է պատրաստվելու դասին, սովորեցնում է հրահանգներին և այլն: Նախապատրաստական մասը ունի չորս գործառույթ: Այս գործառույթի իմաստը սովորողների օրգանիզմը նախապատրաստելն է շարժումների ծանրաբեռնվածությանը: Երկրորդ գործառույթը այն է, որ առաջարկված վարժություններից ուսուցիչը ընտրում է 2-3-ը, որոնք ուղղված են ձևավորելու շարժողական ունակությունները և հմտությունները: Երրորդ գործառույթը

ֆիզիկական վարժությունների օգտագործումն է, որպես որոշակի շարժողական ոլորտների ձևավորման միջոց: Չորրորդ գործառույթը իր մեջ ընդգրկում է վարժությունների այնպիսի մաս, որոնք ուղղված են շտկելու հիմնական և ընթացիկ խանգարումները: Այսպիսով, նախապատրաստական մասը կարող է տևել 10-15 րոպե, կատարվի տարբեր տիպի 8-10 վարժություններ: Դասի հիմնական մասում որոշվում են կրթական, շտկողական և առողջարարական խնդիրներ: Ուսուցչի խնդիրն է դասի հիմնական մասում ընտրել այնպիսի վարժություններ, որոնք կլուծեն թվարկված խնդիրները և կբավարարեն սովորողների ֆիզիոլոգիական պահանջները: Անհրաժեշտ է պահպանել վարժությունների հաջորդականությունը:

Դասի վերջնական մասի ֆունկցիան երկուսն է.

սովորողներին նախապատրաստել հետագա գործողություններին, որպեսզի նրանք կարողանան հանգիստ անցնել այլ դասերի պարապմունքներին,

անցկացնել դասի ամփոփում, գնահատել սովորողների ունակությունները և կարողությունները, նրանց վերաբերմունքը դասի նկատմամբ, ձգտումները: Դասի կառուցվածքը կարող է փոխվել կախված դասի խնդիրներից, երեխաների կազմից և ուսումնական նյութից: Դրա հետ մեկտեղ ֆիզիկական վարժությունների ժամանակ անհրաժեշտ է ցուցաբերել անհատական մոտեցում:

Ֆիզիկական դաստիարակության համար, որպես միջոցներ, կարևոր նշանակություն ունեն *բնական գործոնները*՝ արևը, մաքուր օդը, ջուրը, գեղեցիկ տեսարանները: Դրանց դերը շատ մեծ է երեխաների առողջությունը պահպանելու գործում: Ուստի իզուր չէ ժողովուրդն ասում. «Արևը, օդը և ջուրը մարդու լավագույն բարեկամներն են»: Բնական գործոններն ավելի օգտակար դեր են խաղում, երբ դրանք զուգակցվում են շարժողական գործունեության տարատեսակներին. օրինակ՝ մարմնամարզությանը:

Երեխայի դաստիարակության, աճի, զարգացման, առողջության ամրապնդման և հիմնական շարժողական գործողությունների ձևավորման կարևոր նախադրյալ է հանդիսանում գիտականորեն հիմնավորված ռեժիմի (այդ թվում՝ շարժողական ռեժիմի) պահպանումը: Հարցումը ցույց տվեց, որ ծնողների 77,1 տոկոսը խախտում է երեխայի քնի ռեժիմը, 61,4 տոկոսը՝ կերակրման ռեժիմը, 30,3 տոկոսը՝ հիգիենիկ ընթացակարգերը

(պրոցեդուրաները), 59,6 տոկոսը՝ զբոսանքն ու խաղը: Ընտանեկան պայմաններում երեխաների առողջության ձևավորումն ու ամրապնդումը հեռու է բավարար լինելուց: Այսպես, քաղաքի միայն 23,7 տոկոսը կարող են կոփել իրենց երեխաներին, 66,5 տոկոսը՝ չեն կարող :[4]

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

**Հիմնական մաս** - 3-րդ դասարանում ֆիզկուլտուրայի դաս է, երեխաները պետք է ցատկեին ցատկապարանով: Նույն դասարանի աշակերտ Ա. -ն չի կարողանում ցատկել, ինչի պատճառով դասարանը սկսում է ծիծաղել և ծաղրել տղային:

**Խնդրի էությունը** – Տվյալ մանկավարժական իրավիճակում խնդիրը հետևյալն է՝ ինչպես դադարեցնել ծիծաղը, որպես էմոցիաների բացասական արտահայտություն դասընկերոջ անհաջողության նկատմամբ և ստեղծել փոխաջակցության մթնոլորտ, որտեղ երեխաները կաջակցեն իրենց դասընկերոջը անհաջողության պահին:

**Լուծում** – Որպես իրավիճակի լուծում կարող են օգտագործվել հետևյալ տարբերակները և մեթոդները՝

Կիրառել մանկավարժական պահանջ, որպեսի աշակերտները դադարեն ծիծաղել:

Առաջարկել վարժություններ երեխաների մոտ էմպաթիայի զարգացման համար: Նրանց առաջարկել պատկերացնել մի իրավիճակ, երբ աշակերտները անհաջողության են մատնվում և զգալ այն, ինչը կզգար անհաջողության մատնված աշակերտը աջակցության փոխարեն ծիծաղ լսելով համադասարանցիների կողմից:

Հարկավոր է երեխաների հետ վարել դաստիարակչական թեմաներով զրույց՝ մեզ շրջապատող մարդկանց վերաբերյալ աջակցության, փոխօգնության, ուշադրության և հոգատարության դրսևորման վերաբերյալ:

Կարելի է օգտագործել անձի գիտակցության ձևավորման մեթոդներից օրինակի մեթոդը՝ բերել օրինակներ հայտնի մարզիկների կյանքից երբ, շրջապատի աջակցությունը օգնել է նրանց հաղթահարել անհաջողությունները մրցույթների ժամանակ:

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

**Հիմնական մաս** - Վեցերորդ դասարանի աշակերտ Ա. -ն գերազանցիկ է: Նա սիրում է սովորել, սիրում է ինքն իրեն գտնել տեղեկություններ հանրագիտարաններում և համացանցում: Դասերին նա շատ հարցեր է տալիս: Ռուսաց լեզվի ուսուցչուհուն դա անընդունելի է թվում և նա Ա. -ի վրա բարկանում է, երբ նա փորձում է պարծենալ գիտելիքներով: Արդյունքում դեռահասը սկսում է բացասական վերաբերմունք ցուցաբերել ուսուցչուհու նկատմամբ (բայց ոչ առարկայի նկատմամբ):

Մանկավարժը չկարողանալով լուծել իրացիճակը հրաժարվեց ընդհանրապես դասեր վարել այդ դասարանում:

**Իմ կարծիքը** - Նման իրավիճակները հազվադեպ չեն: Ուսուցիչները իրենք ընդունում են, որ նրանք ավելի հանգիստ են աշխատել միջին կարողություն ունեցող երեխաների հետ, Նրանք, ում վարքը նման շարքից դուրս է գալիս, խախտում են դասի սովորական ընթացքը, ստիպում են ուսուցչին ինքնակատարելագործվել, փոխվել : Դա լավ է, բայց ոչ բոլորն են պատրաստ նման.

**Լուծում** - Խնդրի լուծում Բհարկե, աշակերտի և ուսուցչի միջև կոնֆլիկտի առաջացման դեպքում մեծահասակը պարտավոր է զիջումների գնալու պարզապես այն պատճառով, որ նա չափահաս է և հասկանում է իրավիճակի զավեշտությունը: Ինչ անել, եթե դա չի ստացվում: Մեկ այլ տարբերակ է միջնորդել բանակցությունների համար՝ ի դեմս մեկ այլ ուսուցչի: Ընդունելի է, եթե աշակերտը չի հակասում բոլոր մանկավարժներին. Կա ուսուցիչ, որի հետ կա փոխըմբռնում: Նա կարող է հանդես գալ որպես միջնորդ. Երրորդ ուժը միշտ խախտում է դիմակայության էությունը: Նման դիվանագետ կարող է հանդես գալ նաև ինչ-որ մեկը դասարանից, որպեսզի հարաբերություններում հավասարակշռություն պահպանվի :

## ԵԶՐԱԿԱՑ ՈՒԹՅՈՒՆ

**Ֆիզիկական կուլտուրան** սոցիալական գործունեության ոլորտ է, որն ուղղված է առողջության ամրապնդմանն ու պահպանմանը, մարդու մտավոր և ֆիզիկական կարողությունների զարգացմանը: Այն իրենից ներկայացնում է մշակույթի մի մաս, որն ընդգրկում է մի շարք արժեքների և գիտելիքների համադրում և օգտագործվում է հասարակության ֆիզիկական ու մտավոր զարգացման, մարդու հնարավորությունների բարելավման համար:

Այսպիսով թեմայի ուսումնասիրման նպատակը դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացման էությունն է: Գրականության մեջ բացակայում են միասնական մոտեցումները, որոնք կբնութագրեին կրտսեր դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացման էությունը և այն, թե ինչպես են դրանք փոխկապակցված ինտելեկտի հետ:

Ստեղծագործությունը գործունեություն է, որը նոր բան է ծնում՝ օգտագործելով արդեն իսկ ունեցած փորձը, ինչպես նաև համադրելով գիտելիքներն ու հմտությունները: Առանձնացնում են ստեղծագործության բազմաթիվ տեսակներ: Մի մակարդակ կարելի է բնութագրել արդեն գոյություն ունեցող գիտելիքների օգտագործմամբ, իսկ մյուս մակարդակը ենթադրում է նոր մոտեցումների ստեղծում: Ունակությունների տակ դիտարկվում են անձի անհատական-հոգեբանական առանձնահատկությունները, որոնք հանդիսանում են այնպիսի պայման, որը նպաստում է որևէ արդյունավետ գործունեության հաջող իրականացմանը: Ստեղծագործական ունակությունները անձի անհատական առանձնահատկությունների ամբողջություն են, որոնք որոշում են ստեղծագործական գործունեության որոշակի տեսակի հաջող իրականացման հնարավորությունը և պայմանավորում դրա արդյունավետության մակարդակը:

Ֆիզիկական կուլտուրան կրթական հաստատություններում ներկայացված է որպես կրթական ոլորտ, որպես ուսումնական առարկա և աշակերտների անձի ձևավորման կարևորագույն հիմնական բաղադրիչ, որը արտացոլված է Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենքում: Այն նպատակ ունի ապահովել կենսականորեն կարևոր

շարժողական հմտությունների և ունակությունների անհրաժեշտ մակարդակի զարգացումը, ինչպես նաև տալիս է տեսական գիտելիքներ: Լինելով կրթության բաղադրիչի պարտադիր մաս՝ ֆիզկուլտուրան նպաստում է աշակերտների հոգու և մարմնի ներդաշնակությանը, նրանց մոտ ձևավորում է այնպիսի համամարդկային արժեքներ, ինչպիսիք են՝ առողջությունը, ֆիզիկական և հոգեբանական բարեկեցությունը: Բազմաստիճան կրթական համակարգում ֆիզկուլտուրայի բովանդակությունը որոշվում է պետական կրթական չափորոշիչներով, ուսումնական պլանով և օրինակելի ուսումնական ծրագրերով: Այս ամենը ապահովում է աշակերտների ֆիզիկական դաստիարակության անընդհատությունը, տարբեր տարիքի և սեռի դպրոցականների շարժողական և ֆիզիկական պատրաստվածության հանդեպ նրա բովանդակության և պահանջների հաջորդականությունը: Աճող սերունդի ֆիզիկական դաստիարակության գործընթացի հետագա կատարելագործման համար իմ կարծիքով նոր մեթոդների, միջոցների, մանկավարժական և ստեղծագործական մոտեցումների պահանջից ելնելով՝ դպրոցական ֆիզիկական դաստիարակության ուսումնադաստիարակչական գործընթացը պետք է ուղղորդել նորարարական բարեփոխումների, որոնք կայանում են ֆիզիկական կուլտուրայի ուսումնական ծրագրերի բովանդակության հանդեպ սպորտային մոտեցման մեջ, իսկ դպրոցական ֆիզիկական դաստիարակությունում առանձնացնել սպորտային ուղղվածությամբ պատրաստություն հասկացությունը, կամ այսպես կոչված «սպորտայնացումը»:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Ռ. Խաչատրյան Ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա, Երևան, 1954:
2. Գյուլամիրյան Ջ., Խաղալով սովորենք, Ջանգալ 97, Երևան, 2009:
3. Вайзман Н. Психомоторика умственно отсталых детей. М., 1997.
4. Дмитриев А.А. Физическая культура в специальном образовании. М., 2002.
5. Дмитриев А.А. Физическое воспитание учащихся вспомогательной школы.
6. Катаева, А.А. Дошкольная олигофренопедагогика [Текст] / А.А. Катаева, Е.А. Стребелева –М. : 2001.
7. Мозговой В.М. Развитие двигательных возможностей учащихся с нарушениями интеллекта в процессе физического воспитания. М., 2001.
8. <http://doctors.am/hy/symptoms/pathological-synkinesis>